


ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Աղատներուն ողորմութիւն ընելու մասին

Անոնք, որ շատ հարստութիւն կը հաւաքեն եւ ողորմութիւն չեն սերմաներ, դատարկ ձեռքով կը մեկնին այս աշխարհէն եւ կ'առաքուին անտանելի եւ անողորմ կրակը: Եւ Տէրը այս մէկը կ'իմացնէ, երբ կ'ըսէ. «Աշխարհիկ հարստութիւնը գործածեցէք այնպէս մը, որ Աստուծոյ բարեկամութիւնը շահիք, որպէսզի երբ այս աշխարհէն ելլէք՝ յաիտենական յարկերուն մէջ ընդունին» (Դուկ. 16.9): Նոյնը Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Սիրոյ հետամուտ եղէք ու նաեւ նախանձախնդիր՝ աղքատներու ողորմութեան, որովհետեւ դուք ալ Քրիստոսէ ողորմութիւն պիտի ստանաք» (Ա. Կոր. 14.1): Ո՛չ մէկ բան կը թեթեւցնէ մեղքին ծանրութիւնը, բացի աղքատին տրուած ողորմութենէն եւ գութէն, ինչպէս սուրբ Դանիէլ Նաբուգոդոնոսորին կ'ուսուցանէր, երբ ան իր մեղքերուն պատճառաւ հիւանդացած էր: Մարգարէին կը հարցնէր, թէ ինչպիսի դեղեր կան այս հիւանդութեան համար եւ Դանիէլ, որպէս բժիշկ իրեն մօտենալով կ'ըսէր. «Ո՛վ արքայ, ո՛չ պահքը, ո՛չ արթուն ըլլալը, ո՛չ քուրճը եւ ոչ ալ առանձնութիւնը կրնան օգտակար ըլլալ, այլ գնա՛՛ եւ մեղքերդ ողորմութեամբ քաւէ՛, իսկ անօրէնութիւններդ՝ աղքատներուն գթալով: Այս արարքն է, որ քեզ պիտի արդարացնէ եւ այս ճանապարհն է, որ քեզ յաիտենական կեանքի պիտի առաջնորդէ» (Դանիէլ. 4.27):

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՐԱՎԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՎՏԱՏՈՒՄԸ

Աստուածորդին վերոյիշեալ բառերը արտասանելով՝ յաիտենական ուխտ մը կնքեց առաքելութեան հետ: Ուխտ մը, որ պիտի դառնար իր աստուածային առաքելութեան պսակումը: Ուխտ մը, որ պիտի իմաստաւորէր իր Խաչելութեան խորհուրդով եւ իր իսկ անձին պատարագումով:

Քրիստոս աշխարհ եկած էր, որպէս միջնորդ հաշտութեան՝ Հօր Աստուծոյ եւ ադամական մեղքով այլատրած մարդկութեան միջեւ: Այս նուիրական առաքելութիւնը կ'իրագործուէր Փրկագործութեան Խորհուրդով: Յիսուս իր Մարմինն ու Արիւնը, որպէս գրաւական կու տար մարդկութեան ինչպէս Պօղոս Առաքեալ հարազատօրէն մեկնաբանելով պիտի ըսէր. «Չէ՞ք գիտեր, որ ձեր մարմինները...

Շարունակելի

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՀ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 21 ՅՈՒՆԻՈՒԱՐ 2024

ԹԻԻ 3

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
Ես. 61.10-62.9: Բ. Տմ. 2.15-26: Յհ. 6.15-21

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 6.15-21

Յիսուս, երբ գիտցաւ, թէ պիտի գան զինք բռնութեամբ թագաւոր ընելու, դարձեալ լեռը ելաւ, առանձինն:

Երեկոյեան, Յիսուսի աշակերտները լիճին եզերքը իջան եւ նաւակ մտնելով՝ սկսան երթալ լիճին դիմացի կողմը, դէպի Կափառնաւոմ: Երբ մթնցաւ, տակաւին Յիսուս իրենց չէր եկած: Լիճը զօրաւոր հովէն կ'ալելոծէր:

Աշակերտները հազիւ հինգ կամ վեց քիլոմէթր նաւարկած էին, երբ տեսան Յիսուսը, որ լիճին վրայէն քալելով կը մօտենար նաւակին: Բոլորը սարսափեցան: Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ, մի՛ վախնաք»:

Անոնք կ'ուզէին զինք նաւակին մէջ առնել, բայց արդէն նաւակը հասաւ այն տեղը, ուր կ'երթային:

ԵՍ ԵՄ ՄԻ՛ ՎԱԽՆԱՔ

Յիսուս կը սպասէ, որ մի՛շտ բացարձակ վստահութիւն ունենանք իր նկատմամբ: Հաւատացեալները երկու խումբի կը բաժնուին: Ոմանք մի՛շտ Աստուծոյ կը վստահին, իսկ ուրիշներ փորձութիւններու հանդիպելէն ետք կը սկսին Աստուծոյ վստահիլ եւ յուսալ: Պէտք է Աստուծոյ վստահի՞լ, որպէսզի չվախնանք, թէ պէտք է վախնանք՝ որպէսզի Աստուծոյ վստահինք: Աշակերտները Յիսուսը ուզեցին ունենալ, երբ զգացին, թէ իրենք վտանգի մէջ են: Զինք ջուրին վրայ տեսնելէն ետք վստահեցան իրեն: Մենք ալ, իբրեւ հաւատացեալներ միշտ պէտք է վստահինք Աստուծոյ՝ ոչ թէ միայն փորձութեան ժամանակ: Միշտ Աստուծոյ ներկայութիւնը պահենք մեր կեանքին մէջ, չվստահինք մեր «ես»-ին, այլ՝ Աստուծոյ, որովհետեւ Աստուած ինքն է մեր Հայրը եւ մեր տէրը: Քրիստոսն է մեր լոյսը եւ կեանքը: Մենք վախ պիտի չունենաք:

ՃՐԱԳ ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ -
Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ թերթ
ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քեկյ. Սարգիսեան

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԱՌԱՋԱՒՈՐԱՅ ՊԱՀՔ

Գրիգոր Լուսաւորիչի կողմէ սահմանուած առաջին պահքը կը կոչուի՝ Առաջաւորաց Պահք:

Գրիգոր Լուսաւորիչ, Խոր Վիրապէն ելլելէն ետք՝ 65 օր քարոզեց աղօթքով, Կեանքի Խօսքի քարոզչութեամբ հայ ժողովուրդը պատրաստելու համար եւ վերջին հինգ օրերուն համար ծով նշանակեց ի յիշատակ Հայաստանի լուսաւորութեան: Այս սկզբունքով, Առաջաւորաց Պահքը համարուեցաւ Հայոց առաջին ազգային պահքը:

Առաջաւորաց պահքի ժամանակ եկեղեցւոյ մէջ Գիրք կամ Աւետարան չեն կարդար եւ Պատարագ չի մատուցուիր, որովհետեւ Առաջաւորաց Պահքի մէջ խորհրդաբար Ադամի անկումը կը յիշատակուի: Ադամի ժամանակ «Գիրք եւ Մարգարէք» գոյութիւն չունէին: Ուրբաթ օրը կը կարդացուի Յովնանու մարգարէութիւնը՝ Նինուէի փրկութեան համար:

Առաջաւորաց Պահքի Շաբաթ օրը՝ Ս. Սարգիս գորավարի յիշատակն է: Ոմանք, Առաջաւորաց Պահքը կը շփոթեն Ս. Սարգիսի տօնին հետ եւ թիրիմացաբար կը կոչեն Ս. Սարգիսի պահք: Եկեղեցական օրէնքով սուրբերը պահքի օրեր չունին, հետեւաբար՝ Ս. Սարգիս եւս պահք չունի:

Աստուած օրհնէ մեր ժողովուրդը:

Հաւատքով լեցուն

Ճոմապահուիլն կը մաղթենք

ՀՐԱԺԱՐԻՄՔ

ՀՐԱԺԱՐԻՄՔ

Ի՞նչ է «Հրաժարիմք»-ը: Հաւատացեալներ գիտեն, թէ Մեծ Պահոց շրջանին, Արեւագալի ժամերգութեան ատեն, ինչպէս նաեւ մկրտութեան խորհրդակատարութեան ատեն բոլորն ալ դէպի արեւմուտք կը դառնան եւ երեք անգամ «հրաժարիմք»-ը կ'արտասանուի:

«Հրաժարիմք»-ը կը հրաժարիմք բային գրաբար ձեւն է:

«Հրաժարիմք»-ը արտասանելով կը մերժենք, կը հեռանանք եւ կը հրաժարիմք սատանայի բոլոր տեսակի խաբէութիւններէն, մտածումներէն, պարանքներէն, եւ սատանայի բոլոր տեսակի գործակիցներէն:

«Հրաժարիմք»-ի ատեն Արեւմուտք կը դառնանք, որ հակառակ կողմն է Արեւելին: Եկեղեցականօրէն Արեւելք կը խորհրդանշէ Աստուծոյ ուղղութիւնը: Աստուծոյ Գահը կը գտնուի Արեւելք, անոր համար մեր եկեղեցւոյ բոլոր խորանները կը նային դէպի Արեւելք: Արեւելքը կը խորհրդանշէ Լոյսը, Աստուծոյ գիտութիւնը: Արեւմուտքն ալ Աստուծոյ հակառակ ուղղութիւնն է:

ՀՐԱԺԱՐՈՒՄ

Կը հրաժարիմք Սատանայէն եւ անոր բոլոր տեսակի խաբէութիւններէն, անոր պարանքներէն, խորհուրդներէն, ցամբանքներէն, անոր չար կամքէն, անոր չար հրեշտակներէն, չար գործակիցներէն, անոր չար կեանքը կատարողներէն, եւ անոր ամբողջ չար գործքներէն, ամբողջութեամբ կը հրաժարիմք:

ՕՐԹԻ ԳԻՐՔԷՆ

Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Պ Ա Տ Գ Ա Մ

ԱՂՕԹԵԼ ԱՆՀԱՏԱՊԵՍ ԵՒ ՀՄԱՔԱՐԱՐ

Քրիստոս կը խօսի թէ՛ անհատապէս աղօթելու մասին (Մտ. 6.6) եւ թէ՛ հաւաքաբար աղօթելու մասին (Մտ. 18.19-20): Անհատ մը Քրիստոսի մարմինն մէկ անդամն է, իսկ անդամներու ամբողջութիւնը՝ կը կազմէ Քրիստոսի մարմինը: Ուստի անհատը պէտք է աղօթէ հաւաքականութեան համար եւ հաւաքականութիւնը պէտք է աղօթէ անհատին համար: Կարելի չէ հաւաքական աղօթքները զանց ընել, որովհետեւ հո՛ն է, որ Քրիստոսի եկեղեցին կը դառնայ Քրիստոսի մարմինը, եւ ո՛չ ալ կարելի է անհատական աղօթքները զանց ընել, որովհետեւ հո՛ն է, որ աղօթող մարդը կը դառնայ անդամ Քրիստոսի մարմինին:

Հաւաքականութեան հոգեւոր աճման համար հաւաքականութիւնը ի՛նք պէտք է աղօթէ:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ

Շատեր, որ իրենք զիրենք քրիստոնէայ կը նկատեն, երբեք չեն կարդացած Քրիստոսի Գիրքը՝ Աստուածաշունչը: Կարելի՞ քան է, քրիստոնէայ ըլլալ, առանց Քրիստոսի Գիրքին: Կարելի՞ քան է սիրել Քրիստոսը բայց, չսիրել անոր Գիրքը:

ԵԹԵ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՋԵՍ...

ԵՐԲ ԿՈՒՋԵՍ ԳԻՏՆԱԿ ԶԱՐԵՐՈՒՄՆ ՎԱՆՃԱՆԵՐ, Կարդա՛ր Սաղմոս 52

Ինչո՞ւ չարութեամբ կը պարծենաս, ամբարտաւան մարդ, մնալուն նախատինք դառնալով Աստուծոյ: Չարիքներ կը խորհիս, լեզուովդ կը վիրաւորես սուր անելիի պէս, եւ նենգութիւն կ'ընես: Բարիքէն անելի չարիքը կը սիրես, ճշմարտութիւնը խօսելէն անելի՝ ստութիւնը: Կը սիրես կործանիչ խօսքեր, դուն՝ նենգաւոր լեզու: Ուստի Աստուած քեզի յախտեան պիտի կործանէ, պիտի բռնէ ու խլէ քեզ քու տունէդ, արմատախիլ պիտի ընէ քեզ ողջերու աշխարհէն: Արդարները պիտի տեսնեն ու վախնան, պիտի ծիծաղին քու վրայ, եւ պիտի ըսեն,- «Ահա այն մարդը, որ զԱստուած իր ապաւենը չդարձուց, իր անբաւ հարստութեան վստահեցաւ, եւ չարութեան մէջ փնտռեց իր գործութիւնը»: Բայց ես Աստուծոյ տան մէջ տնկուած պտղալից ձիթենի մըն եմ, Աստուծոյ սիրոյն կը վստահիմ առ յաւիտ:

Մեզի յաւիտ գոհութիւն պիտի յայտնեն, ո՛վ Աստուած, ինծի ըրած քու բարիքներուդ համար, եւ քու անունդ ու բարութիւնդ պիտի հռչակեն ներկայութեանը անոնց՝ որոնք քեզի հաւատարիմ են:

ՄԻՇՏ ՍԱՂՄՈՍ ԿԱՐԳԱՅԷՔ